Հիմնավորում

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետարգել համայնքում ճանապարհի կառուցելու համար վերաբերյալ

Գետարգել համայնքի մասին

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետարգել համայնքն ունի շուրջ 857 բնակիչ: Համայնքում գործում է դպրոց, որտեղ սովորում են 150 աշակերտ և նախակրթարան, որտեղ հաճախում են 19 երեխա:

Համայնքում հիմնական զբաղմունքը պտղաբուծությունն ու անասնապահությունն է:

Հանրօգուտ ծրագիր

Գետարգել համայնքում կառուցվող ճանապարհի ընդհանուր մակերեսը 820 քմ է, որի շինարարական աշխատանքների արժեքը կազմում է շուրջ 6 000 000 ՀՀ դրամ: Նախագծանախահաշվային փաստաթղթերը համաձայնեցված են բոլոր շահագրգիռ մարմինների հետ:

Շինարարական աշխատանքները հանձն է առնում կատարել Գետարգելի համայնքապետարանը, հողային աշխատանքերը մասամբ կատարված են:

Ծրագիրը նախատեսվում է ավարտին հասցնել 2021-2022 թվականների ընթացքում.

-հողային աշխատանքները՝ 2021 թվականի վերջին,

- ասֆալտապատման աշխատանքները՝ 2022 թվականի ընթացքում:

Հանրօգուտ ծրագրի իրականացման արդյունքում Գետարգել համայնքը կունենա նոր ասֆալտապատ ճանապարհ, որն էլ կնպաստի համայնքի տնտեսական զարգացմանը և բնակիչների սոցիալական կյանքի բարելավմանը:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետարգել համայնքում ճանապարհ կառուցելու վերաբերյալ

ՀՀ Կոտայքի մարզի Գետարգել համայնքում բնակվում են մոտ 857 մարդ: Համայնքում գործում է դպրոց և նախակրթարան: Բնակիչների սոցիալական կյանքի բարելավման և անվտանգ երթևեկության համար անհրաժեշտություն է առաջացել կառուցել նոր ճանապարհ:

Նոր ասֆալտապատ ճանապարհի կառուցումը կնպաստի համայնքի տնտեսության զարգացմանը, բնակիչների առջև ծառացած խնդիրների լուծմանը և տրանսպորտային միջոցների անխափան երթևեկությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն առարկություն չունի Հայաստանի Հանրապետության ՀՀ Կոտայքի մարզի Գետարգել համայնքում նոր ճանապարհի կառուցման վերաբերյալ: